

## Բարդ նախադասության գծապատկերը 9- րդ դասարան

1. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Տանտիրոջ աղջիկը դուռը ծեծեց, գեղեցիկ զլուխը ներս մտցրեց, եկավ հարցնելու Պիրենեյան թերակղզու տեղը և նայելու իմ երեսին:

2. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Նա աչքերը բացեց մյուս օրը և տեսավ, որ արեգակը կանգնել էր կեսօրվա տեղը, և սար, դաշտ ու ձոր լցված էին պայծառ, անսահման լուսավորությամբ:

3. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Եթե բժիշկը անձրևոտ գիշերով չգնար հարևան գյուղ՝ հիվանդ երեխային պզնելու, ոչ ոք աշխարհում չէր կարող մեղադրել նրան, որովհետև նա ինքն էր օգնության կարոտ:

4. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Թեև քաղաքը հեռու չէր, եկած ճանապարհը՝ մեզ ծանոթ, ուրիշ աշխարհ թվաց մեզ ձորի այդ անկյունը, ուր ծվարել էր փոքրիկ քաղաքը:

5. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Երբ հինավուրց ծառը դրոյումով ընկավ, և տունը նկատելիորեն ցնցվեց, նկարիչը, վերցնելով վերարկուն, հապճեպ իջավ բակ:

6. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Անդոն տեսավ, որ ձին հևում է ծանր բեռան տակ, և ինքն առաջին անգամ խղճաց նրան:

7. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Եթե այդ կինը բլրակի վրա լիներ, կտեսներ, որ շունը վերադարձել է:

8. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Նա ճանապարհին մտածեց, թե ինչ հարցեր կարող էր տալ իրեն եղբայրը, և ինքն ինչպես պիտի պատասխաներ:

9. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Իրիկնադեմ էր արդեն, երբ Ավին, շալակի ցախը դնելով քարին, նստեց մի կոճղի, որ մի քիչ շունչ առնի:

10. Գծել տրված բարդ նախադասության գծապատկերը:

Երբեմն կեսգիշերից ուշ այդ փողոցով անցնողները լսել են տխուր երգի և նվագի ձայն և ենթադրել, որ այն կույր երաժիշտն է փչում իր սրինգը:

## Լրացնել նախադասությունները 9-րդ դասարան

1. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Անցորդները հապշտապ մտնում էին ծածկերի տակ, .....անծրկը տարափի չէր վերածվել:

- 1) թե չէ
- 2) թե որ
- 3) ուստի
- 4) քանի դեռ

2. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Նրանք, ..... աշխատեն, ամբողջ ժամանակ խոսում են:

- 1) փոխարեն
- 2) մինչև որ
- 3) փոխանակ
- 4) մինչդեռ

3. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Զնայած Վահանը ամբողջ ճանապարհին փորձում էր ուրախ երևալ, .....ես զգում էի նրա հոգու խռովքը:

- 1) ապա
- 2) հետևաբար
- 3) ուստի
- 4) այնուամենայնիվ

4. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Դու, ..... երկնքի որդին ես, պիտի իմանաս այն, ինչ որ մենք չենք կարող իմանալ:

- 1) ով
- 2) ուստի
- 3) որ
- 4) մինչդեռ

5. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Արևը վաղուց թեքվել էր դեպի մայրամուտ, և մութն էլ քիչ-քիչ ընկնում էր, .....դաշտում դեռ աշխատող գեղջուկներ կային:

- 1) քանի որ
- 2) քանի դեռ
- 3) բայց և այնպես
- 4) ինչքան էլ

6. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Պարզապես անհավատալի էր, ....թաղամասի մարդիկ, լսելով Սելինայի մահվան լուրը, թողել էին իրենց ամենօրյա գործերն ու շտապել դեպքի վայր:

- |        |         |
|--------|---------|
| 1) երբ | 3) որ   |
| 2) թե  | 4) մինչ |

7. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
....., որն ակնթարթորեն կկուրացնի և ակնթարթորեն էլ կանհետանա:

- 1) Հրավառության նման է մարդու տաղանդը՝ առանց աշխատանքի
- 2) Առանց աշխատանքի հրավառության է նման մարդու տաղանդը
- 3) Առանց աշխատանքի մարդու տաղանդը նման է հրավառության
- 4) Առանց աշխատանքի հրավառության է նման տաղանդը մարդու

8. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
Անգլիական մի վիճակագրություն ցույց է տալիս,.....:

- 1) որ Լոնդոնում հինգ գողությունից չորսի անմիջական պատճառը քաղցն է
- 2) լոնդոնյան գողությունների իրական պատճառը
- 3) թե Լոնդոնում գողությունների պատճառը քաղցն է
- 4) ժան Վալժանը գողություն էր կատարել քաղցի պատճառով

9. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
....., որը դրսևորվել էր դեռևս պատանեկության հասակից:

- 1) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը այդ տարիներին բուռն վերելք ապրեց
- 2) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը այդ տարիներին էր բուռն վերելք ապրում
- 3) Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը բուռն վերելք ապրեց այդ տարիներին
- 4) Այդ տարիներին բուռն վերելք ապրեց Լերմոնտովի ստեղծագործական ձիրքը

10. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
.....,որը մի քանի վայրկյան կտրեց նրան մտածմունքներից:

- 1)Մի գվարթ աղմուկ հանկարծ սթափեցրեց նրան
- 2) Մի գվարթ աղմուկ հանկարծ նրան սթափեցրեց
- 3) Հանկարծ լսվեց մի գվարթ աղմուկ
- 4) Նա դեռ չէր լսել այն գվարթ աղմուկը

11. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
Երբ մոտենում էի քո առանձնասենյակին,.....,որ հնչում էր այնքան հուզիչ ու տխուր:

- 1) ներսից լսեցի ջութակի նվագի ձայն
- 2) հիշեցի նախորդ օրվա երդումդ
- 3) ինչ – որ խոսակցության ձայներ լսեցի
- 4) նրա գվարթ ժպիտն էր աչքիս երևում

12. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:  
Ոչ ոք չիմացավ,....., թեև բոլորը սպասում էին դրան:

- 1,քանի որ բոլորը աղմկում էին
- 2.թե ինչպես հրդեհը միանգամից բռնկվեց
- 3.թե երբ ձայթեց զարնանամուտի առաջին ամպրոպը
- 4.թե ինչու հանկարծ արևը մայր մտավ